
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՊՈՂՈՍՅԱՆ ԼԵՈՆԱՐԴ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի միջազգային համագործակցության և հանրային կապերի բաժնի գլխավոր մասնագետ,
Փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնի համատեղման կարգով անգլերենի դասախոս

ԳԵՆՋՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման միջին մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության երկրորդ կուրսի սովորող

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐՅԱ

ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման միջին մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության երկրորդ կուրսի սովորող
DOI: 10.63925/18294847-2026.bl21-15

Համառոտագիր: Հոդվածում քննության են առնվում այն համալիր և բազմաշերտ գործընթացները, որոնք սահմանում են անգլերենի դերի ընդլայնումն իրավապահ մարմիններում՝ այն վերածելով ոչ միայն հաղորդակցման գործնական միջոցի, այլև ինստիտուցիոնալ զարգացման կարևոր գործոնի: Սույն համատեքստում կարևոր է ընդգծել, որ անգլերենը ծառայողների համար աստիճանաբար ձևավորվում է որպես կարևոր նշանակություն ունեցող լեզու՝ ազդելով իրավապահ համակարգի կառուցվածքային և բազմաշերտ մակարդակների վրա:

Հոդվածում քննության են առնվել այն հիմնարար գործոնները, որոնք նպաստում են անգլերենի գործառույթային դերի ընդլայնմանը՝ ներառյալ միջազգային համագործակցության ընդլայնումը, համատեղ գործողությունների և հետաքննությունների ծավալումը, տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումը և գլոբալ հաղորդակցման միասնական ստանդարտների կիրառումը:

Հոդվածում ուսումնասիրվում են այն կարևոր և բազմակողմանի խնդիրները, որոնք վերաբերում են անգլերենի դերին և կիրառությանը իրավապահ մարմիններում, մասնավորապես՝ ոստիկանական գործում:

Դասավանդման առանձնահատկություններն ուսումնասիրելիս պարզ է դարձել, թե ինչպես են մշակվել կրթական ծրագրերը՝ ապահովելով ծառայողների պատրաստվածությունն ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակներում՝ միաժամանակ հաշվի առնելով գործնական պահանջները և իրավաբանական առանձնահատկությունները: Կարևոր է ընդգծել, որ անգլերենի կիրառումը ոչ միայն բարձրացնում է ոստիկանության աշխատանքի արդյունավետությունը, այլև նպաստում է իրավապահ մարմինների արդիականացմանը և միջազգային գործընկերների հետ հաղորդակցման որակի բարելավմանը:

Հոդվածում ներկայացվում է մասնագիտական անգլերենի դերն իրավապահ համակարգում՝ ընդգծելով դասավանդման պահանջները, միջազգային փորձը, կիրառման առանձնահատկությունները, լեզվական և մեթոդական մարտահրավերները:

Հիմնաբառեր: Մասնագիտական անգլերեն, ոստիկանական գործ, իրավապահ մարմիններ, հեռանկարներ, լեզու, օպերատիվ հաղորդակցություն, հրամաններ:

Ներածություն: Իրավապահ մարմինների գործունեության ակտիվացումը, միջազգային համագործակցության ընդլայնումն անգլերենի իմացությունը դարձնում են ոչ միայն մասնագիտական հմտություն, այլև համակարգային անհրաժեշտություն¹:

Ժամանակակից իրավապահ համակարգում անգլերենի կիրառությունը պայմանավորված է ինչպես օպերատիվ հաղորդակցության արագությամբ և ճշգրտությամբ, այնպես էլ իրավական փաստաթղթերի, հրահանգների, համագործակցության ձևաչափերի և միջազգային մեխանիզմների նկատմամբ աճող պահանջներով²:

¹ St´u Hall D., International Cooperation and Language Competence in Law Enforcement //Journal of Police Studies, Vol. 14(2), London, 2020, էջ 45–62.

² St´u Fountoulakis M. St., English Language Proficiency and its Impact on Professional Identity, Operational Skills, and Gender Dynamics among Police Cadets in Greece, Athens // Journal of Advanced Research in Social Sciences, Vol. 7(3), 2024, էջ 89–102.

Անգլերենի իմացությունն իրավապահ ոլորտում ընդգրկում է տերմինաբանական ճշգրտություն, իրավական լեզվի վերլուծություն, օպերատիվ-մեթոդական հաղորդակցություն և միջմշակութային հաղորդակցման հմտություններ³:

Թույլատրվող գործոններից են ինչպես լեզվական պատրաստվածության մակարդակը, այնպես էլ համապատասխան կրթական ծրագրերի կառուցվածքը, որոնք պետք է համադրեն տեսական գիտելիքը գործնական իրավիճակների հետ:

Ուսումնասիրված են նաև այն լեզվաբանական և մեթոդական մարտահրավերները, որոնք հանդիպում են ոստիկանության ծառայողներին. մասնագիտական բառապաշարի յուրացման բարդությունը, իրավական փաստաթղթերի բովանդակության ճշգրիտ փոխանցման պահանջը, անհապաղ իրավիճակներում արագ արձագանքման և համարժեք հաղորդակցման անհրաժեշտությունը⁴: Այս պայմաններում անգլերենի դասավանդումը պահանջում է համակարգված մեթոդական մոտեցում՝ ներառյալ աստիճանաբար խորացող հմտությունների զարգացում, սիմուլյացիոն վարժություններ, իրավիճակային մոդելավորում և գնահատման բազմաշերտ մեթոդներ⁵:

Ուշադրություն է դարձվում նաև անգլերենի սոցիալական և ինստիտուցիոնալ ազդեցությանը, որն արտահայտվում է ոստիկանության համակարգի արդիականացման, միջազգային գործընկերների հետ արդյունավետ համագործակցության, ինչպես նաև հանրային վստահության բարձրացման մեջ⁶:

Այսպիսով, հողվածում գնահատվում է անգլերենի դերը իրավապահ մարմիններում՝ ներկայացնելով նրա կրթական, գործնական, լեզվաբանական և մեթոդական բաղադրիչները, ինչպես նաև այն հիմնախնդիրները, որոնք պայմանավորում են անգլերենի արդյունավետ կիրառումը ոստիկանության ծառայողական գործունեության մեջ:

³ St´u Garcıa A., Morton L., Terminology Management and Language Training in Modern Police Forces //International Journal of Applied Linguistics in Public Safety, Vol. 9(1), Madrid, 2019, pp. 33–57.

⁴ St´u Carton A., The Process of Dictionarisation in English for Police// Linguistics and Security Journal, No. 75, Moscow, 2019, էջ 79–95.

⁵ St´u Harper S., Innovative Language Teaching Technologies for Law Enforcement //Journal of Public Safety Pedagogy, Vol. 11(4), New York, 2021, էջ 120–141.

⁶ St´u Larsen P., The Role of English in Police Modernization and Public Trust Building //Journal of Security and Social Communication, Vol. 6(1), Copenhagen, 2022, էջ 14–28.

Ուսումնասիրությունը թույլ է տալիս ոչ միայն ընդհանուր պատկերացում ստանալ անգլերենի դերի մասին իրավապահ համակարգում, այլև բացահայտել այն մեխանիզմները, որոնց միջոցով անգլերենի կիրառումն իրական ազդեցություն է ունենում ծառայողական արդյունավետության վրա:

Հոդվածի **նպատակն է** ներկայացնել անգլերենի դերի բազմաբնույթ նշանակությունն իրավապահ մարմիններում՝ գնահատելով դրա ազդեցությունը ոստիկանության ծառայողական արդյունավետության, օպերատիվ հաղորդակցության, միջազգային համագործակցության և մասնագիտական պատրաստվածության վրա: Մասնավորապես բացահայտել՝ ինչպես է լեզվական պատրաստվածությունը նպաստում ոստիկանության աշխատանքում հիմնարար գործընթացների որակավորման բարձրացմանը և ինչպիսի մեթոդական լուծումներ կարող են ապահովել դրա արդյունավետությունը:

Իրավապահ համակարգում լեզվական պատրաստվածությունը վաղուց դուրս է եկել «օժանդակ» հմտության սահմաններից և դարձել է մասնագիտական կարողությունների առանցքային բաղադրիչ: Ոստիկանության կառույցներում անգլերենի ուսուցման արդիական ռազմավարությունները հիմնվում են երկու գլխավոր սկզբունքի վրա՝ գործնական կիրառելիություն և իրավիճակային ճշգրտություն: Այն աշխատակիցը, որը տիրապետում է օտար լեզվի գործառնական շերտին, կարողանում է ապահովել ինչպես միջազգային հաղորդակցության անխաթար ընթացքը, այնպես էլ ներպետական ծառայողական գործընթացների լեզվաբանական ճշտությունը:

Լեզվական պատրաստվածության բարձրացման արդյունավետ մոտեցումներից առանձնանում է սիմուլյացիոն ուսուցումը: Իրավապահ միջավայրին բնորոշ սցենարներով («Էլեկտրոնային նամակագրություն միջազգային գործընկերների հետ», «օտարերկրյա քաղաքացիների հետ հաղորդակցություն», «միջազգային տվյալների փոխանակման գործընթաց») կատարվող վարժությունները ձևավորում են լեզվի գործառնական օգտագործման պրակտիկ հմտություններ: Այս մեթոդը հաղթահարում է այն դասական խնդիրը, երբ լեզուն սովորեցվում է տեսական, այլ ոչ իրավիճակային տրամաբանությամբ:

Կարևոր տեղ ունի նաև համակարգային շարունակական ուսուցումը, որտեղ լեզվի տիրապետման մակարդակը դիտարկվում է որպես կարիերային առաջխաղացման գործոն: Նման մոտեցումը ձևավորում է ինստիտուցիոնալ մոտիվացիա. յուրաքանչյուր աշխատակցի համար լեզուն դառնում է ոչ թե պարտադիր ուսումնական բեռ, այլ մասնագիտական հզորացման գործիք: Սրան գումարվում է թվային տեխնոլոգիաների ներդրումը՝ շտեմարաններով, ձայնային վարժություններով, տերմինաբանական բազաներով և առցանց հարթակներով, որոնք ապահովում են ինքնուրույն սովորելու հնարավորությունը:

Ոստիկանության ծառայողների մասնագիտական անգլերենի ուսուցման արդյունավետությունն անմիջականորեն կախված է ESP (English for Specific Purposes) մոտեցումների ընտրությունից, մասնավորապես՝ սցենարային մշակումներից, դերաբաշխված վարժություններից և իրավապահ միջավայրին համարժեք իրական գործունեության մոդելավորումներից⁷:

Անգլերենի դասավանդումը պահանջում է հստակ համակարգվածություն, տեխնոլոգիաների ինտեգրում, ինչպես նաև իրավիճակային որոշումների կայացման վրա հիմնված ուսումնառություն, որը համարվում է արդյունավետ մեթոդ իրավապահ կրթական համակարգում⁸:

Հետազոտությունները ցույց են տվել, որ քննադատական մտածողության, հաղորդակցական ճկունության և օպերատիվ արձագանքման համադրված զարգացումն անգլերենով անհրաժեշտ է ոչ միայն միջազգային համագործակցության, այլև ներքին ծառայողական հաղորդակցության մակարդակում: Այս համատեքստում լեզվական պատրաստվածության բարելավման ռազմավարությունները պետք է ներառեն շարունակական վերապատրաստումներ, գնահատման բազմամակարդակ մեխանիզմներ և իրականին մոտարկված սցենարային ուսուցում, որը հնարավորություն է տալիս ծառայողին կիրառել լեզուն ոչ թե տեսական, այլ գործնական միջավայրում:

⁷ St' u Fountoulakis M., Standardizing ESP Pedagogy: A Critical Evaluation of Language Training for Law Enforcement Cadets // International Journal of Higher Education Pedagogies, Vol. 6(1), 2023, էջ 45-59

⁸ St' u Pielmus C. G., Innovation in Teaching English for Law Enforcement: A Technology-Integrated Approach, Society. Integration. Education., 2021, Vol. 3, 2018, էջ 566-579.

Այսպիսով՝ լեզվական պատրաստվածության բարելավման արդյունավետ ռազմավարությունը պահանջում է ինտեգրված մոտեցում, որտեղ դասավանդման բովանդակությունը հատվում է ծառայողական խնդիրների, տեխնոլոգիական գործիքակազմի և մշտական որակավորում ապահովող ինստիտուցիոնալ քաղաքականության հետ:

Անգլերենն ունի կիրառական նշանակություն կիբեռհանցագործությունների դեմ պայքարում: Կիբեռհանցագործությունների շարժընթացն այնպիսի բնույթ ունի, որ ազգային իրավապահ համակարգերը փաստացի գործում են համաշխարհային ցանցի տրամաբանության մեջ: Այս իրողությունն անգլերենը վերածում է ոչ միայն հաղորդակցական միջոցի, այլ նաև տվյալների վերլուծության, գործիքների կիրառման և միջազգային համագործակցության հիմնական լեզվի: Դաշտը ձևավորված է այնպես, որ կիբեռանվտանգության վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերի մեծ մասը, ծրագրային միջավայրերը, հրահանգները, կիբեռ սպառնալիքների նկարագրությունները և անգամ «dark web⁹»-ում շրջանառվող նյութերի գերակշիռ մասը սահմանվում են անգլերենով:

Այստեղ անգլերենի կիրառական նշանակությունը խմբագրվում է երեք առանցքների շուրջ: Առաջինը տեխնիկական կոմպետենտությունն է: Ոստիկանը, որն զբաղվում է կիբեռհանցագործությունների բացահայտմամբ, անխուսափելիորեն բախվում է ծրագրավորման, ցանցային անվտանգության կամ վերլուծական գործիքների այն շերտին, որը ներկայացված է միայն անգլերենով: Լեզվի ոչ բավարար տիրապետումն անմիջապես խոչընդոտում է գործի ընթացքը՝ դանդաղեցնելով ինչպես տվյալների վերլուծությունը, այնպես էլ տեխնիկական արձանագրությունների ըմբռնումը:

Երկրորդ առանցքը միջազգային համագործակցությունն է: Կիբեռհանցագործությունը պետական սահմաններ չի ճանաչում և տեղեկատվության փոխանակումը «Interpol», «Europol» կամ այլ միջազգային մարմինների հետ իրականացվում է բացառապես անգլերենով:

⁹Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Dark_web, մուտք՝ 20.01.2026

Աշխատակցի անգլերենի ոչ բավարար իմացությունը կարող է խաթարել գործուն փոխգործակցության ամբողջ շղթան՝ սկսած դիմումների մշակման արագությունից, մինչև համատեղ գործողությունների ճշգրտությունը:

Երրորդ առանցքն առցանց հետախուզությունն է՝ OSINT (Open-source Intelligence¹⁰) մեթոդներով: Բաց աղբյուրային հետախուզության մեծ մասը, հատկապես սոցիալական ցանցերում և ֆորումներում, մոդերացվում է անգլերեն միջավայրում: Քննիչն ու վերլուծաբանը պիտի կարողանան կարդալ, վերլուծել, համադրել ու որևէ անգամ գտնել լեզվական նրբերանգներ, որոնք ցույց են տալիս հնարավոր հանցավոր գործողությունների նախանշանները:

Այս դաշտում անգլերենն օժանդակ հմտությունից վերածվում է տեխնիկական ներգործության, տեղեկատվական գերակայության և միջազգային վստահելիության հիմքի, ինչը թույլ է տալիս պետությանը լինել ոչ թե հետևող, այլ նախաձեռնող դերակատար:

Կիբեռհանցագործությունների դեմ պայքարում անգլերենի դերն առավել քան լեզվական գործիք է. այն միջազգային հետազոտությունների, թվային հետախուզության, միջազգային իրավական տվյալների բազաների և օպերատիվ տեղեկատվության հասանելիության հիմնական նախապայման է: Կիբեռհանցագործությունների հետաքննչական աշխատանքների մեծ մասը հիմնված է անգլերեն աղբյուրների, համաշխարհային CERT/CIRT¹¹ գրառումների և միջազգային համագործակցության վրա, ուստի անգլերենի վարժ իմացությունն ուղղակիորեն ազդում է տեղեկատվության վերլուծության որակի վրա¹²:

Բացի դրանից, կիբեռանվտանգության միջազգային ուղեցույցների, NIST չափորոշիչների, EUROPOL-ի և INTERPOL-ի տեխնիկական հաշվետվությունների գերակշիռ մասը հատկապես անգլերենով է, ինչի հետևանքով իրավապահ մարմինների ծառայողները պետք է ոչ միայն կարդան, այլև վերլուծեն և կիրառեն այդ նյութերը պրակտիկայում: Այս տեսանկյունից անգլերենը դառնում է ռազմավարական գործիք՝ ապահովելով

¹⁰ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Open-source_intelligence , մուտք՝ 20.01.2026

¹¹ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Computer_emergency_response_team , մուտք՝ 20.01.2026

¹² Տե՛ս Holt T. J., Cybercrime and Digital Forensics: An Introduction, Routledge, 2022, Chapter 4, էջ 87-110.

հանցագործությունների հայտնաբերման, կանխման, և բացահայտման արդյունավետություն:

Անգլերենի ազդեցությունն օպերատիվ հաղորդակցման արդյունավետության վրա շատ խորն է: Ոստիկանության օպերատիվ հաղորդակցումը մի համակարգ է, որտեղ արագությունը, ճշգրտությունը և տեղեկատվության անխափան փոխանցումը որոշիչ են: Երբ այս շղթայում ներգրավվում են բազմազգ քաղաքացիներ, միջազգային գործընկերներ կամ օտարերկրյա կառույցներ, անգլերենը դառնում է միակ համընդհանուր լեզուն, որն ապահովում է հաղորդակցության գործուն շարունակականությունը: Ցանկացած խմբագրված, անճշտորեն փոխանցված կամ թերի ընկալված հաղորդագրություն կարող է ազդել գործողության որակի, միջոցառման արդյունքների կամ նույնիսկ քաղաքացիների անվտանգության վրա:

Օպերատիվ հաղորդակցությունում անգլերենի ազդեցությունը դրսևորվում է երեք մակարդակով: Առաջին մակարդակը հաղորդագրության կառուցվածքն ու բովանդակային հստակությունն է: Անգլերենում կիրառվող տերմինաբանությունը, հրամանային ձևերը և գործառնական բառակապակցությունները պարտադիր է, որ փոխանցվեն առանց իմաստային աղավաղման: Սա վերաբերում է ինչպես հրահանգներին («stand by», «secure the perimeter»), այնպես էլ իրավիճակային հաղորդագրություններին («possible threat detected», «suspect fleeing eastbound»), որոնք անհրաժեշտ է ճիշտ ընկալել մեկ վայրկյանում:

Երկրորդ մակարդակը միջմշակութային հաղորդակցությունն է: Օգտվելով անգլերենից՝ աշխատակիցը ոչ միայն փոխանցում է տեղեկատվություն, այլև ձևավորում է վստահության լեզվամշակութային հարթություն: Սա հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ գերլարված իրավիճակներում քաղաքացու իրազեկումը պահանջում է ոչ միայն ճիշտ բառեր, այլ նաև դրանց կիրառման հոգեբանական նրբերանգներ:

Երրորդ մակարդակը տեղեկատվական համակարգերի օգտագործումն է: Արտակարգ հաղորդակցման հարթակները, միջազգային արտակարգ տվյալների բազաները, արտակարգ դեպքերի արձագանքման համակարգերը և նույնիսկ արտակարգ

հաղորդագրությունների ծրագրերը նախագծված են անգլերեն միջավայրում: Լեզվի իմացության պակասը կարող է դառնալ ոչ թե տեխնիկական, այլ անվտանգային խնդիր:

Այս ամենը ցույց է տալիս, որ անգլերենն օպերատիվ հաղորդակցման մեջ հանդես է գալիս որպես միջանկյալ, բայց իրականում որոշիչ գործոն: Այն ապահովում է արագություն, ճշգրտություն և փոխադարձ հասանելիություն՝ դարձնելով ուստիկանության արձագանքն ավելի համակարգված և կանխատեսելի:

Անգլերենի իմացության բացն իրավապահ համակարգում այն խնդիրներից մեկն է, որը ժամանակակից իրավապահ գործունեության արդյունավետությունն զգալիորեն կարող է սահմանափակել: Այս հարցը կարևոր է ոչ միայն օպերատիվ գործընթացների տեսանկյունից, այլև իրավական, կրթական, տեխնոլոգիական և միջազգային համագործակցության ոլորտներում: Աշխատակիցների սահմանափակ լեզվական կարողությունը կարող է ազդել մի շարք գործառույթների վրա՝ սկսած փաստաթղթերի ճշգրիտ մշակումից, մինչև թրաֆիքինգի, կիբեռհանցագործությունների, ահաբեկչության և այլ հանցագործությունների բացահայտման:

Խնդրի հաղթահարման ուղիներ

Անգլերենի կարողության բացի հաղթահարման համար անհրաժեշտ է համալիր մոտեցում, որը ներառում է.

➤ Հարուկ ուսուցում և վերապատրաստում

Իրավապահ մարմինները պետք է ներդնեն ուսուցողական ծրագրեր, որոնք կենտրոնացած կլինեն անգլերենի իրավաբանական, հաղորդակցական և մասնագիտական հմտությունների վրա: Դրանք պետք է շարունակական լինեն և մատչելի ողջ աշխատակիցների համար՝ սկսած նոր ընդունվածներից, մինչև պաշտոնյաներ:

➤ Լեզվական կարողության գնահատում և պահանջներ

Աշխատակիցների համար պետք է սահմանել անգլերենի նվազագույն մակարդակ հատկապես նրանց համար, ովքեր ներգրավված են միջազգային գործերի, տվյալների վերլուծության կամ հետաքննության մեջ:

➤ Միջազգային փորձի ինտեգրում

Կարևոր է ապահովել Մասնակցություն միջազգային կոնֆերանսներին, փոխանակման ծրագրերին և վարժանքներին, որտեղ աշխատակիցները հնարավորություն կունենան կիրառել իրենց լեզվական հմտությունները և ձեռք բերել պրակտիկ փորձ:

➤ ***Տվյալների բազմալեզու հասանելիություն և տեխնոլոգիական աջակցություն***

Թարգմանիչ գործիքների, բազմալեզու տվյալների բազաների և վերլուծական ծրագրերի ներդրումը կարող է լրացնել լեզվական բացը:

➤ ***Պարբերաբար սրուգումներ և գնահատումներ***

Փորձնական հարցազրույցներ և վարժություններ՝ աշխատակիցների կարողությունները պահպանելու և բարելավելու համար:

Իրավապահ համակարգում անգլերենի մասնագիտական բառապաշարի և տեխնիկական տերմինաբանության տիրապետումը կարևոր դեր ունի ինչպես օպերատիվ, այնպես էլ վերլուծական գործունեության արդյունավետության բարձրացման մեջ:

Ժամանակակից իրավապահ մարմինները լայնորեն ներդնում են միջազգային չափորոշիչների վրա հիմնված տեխնոլոգիական հարթակներ՝ տվյալների բազաներ, կիբեռանվտանգության համակարգեր, հաղորդակցության ծրագրեր և միջսահմանային իրավական համագործակցության գործիքներ, որոնց մեծ մասը գործում է անգլերեն միջավայրում: Այս պայմաններում իրավապահ ծառայողը հաճախ բախվում է մասնագիտական տերմինների՝ իրավաբանական, կրիմինալիստիկական, տեղեկատվական անվտանգության, գործառնական կառավարման և միջազգային իրավունքի ոլորտների: Դրանց ճշգրիտ և համարժեք ըմբռնումը նվազեցնում է թարգմանական սխալների հավանականությունը, ապահովում է փաստաթղթերի, հաղորդագրությունների և օպերատիվ հաղորդումների ճիշտ մեկնաբանումը, ինչպես նաև նպաստում է միջգործակալական և միջազգային համագործակցության որակի բարձրացմանը:

Բացի պրակտիկ կիրառությունից, անգլերենի տերմինաբանության իմացությունը կարևոր է իրավապահ ծառայողի մասնագիտական զարգացումը շարունակելու համար, քանի որ ոլորտի գիտական հետազոտությունների, մեթոդաբանական ձեռնարկների,

հրահանգների և նորարարական մոտեցումների զգալի մասը հասանելի է հենց անգլերենով:

Տերմինաբանական ճշտագրությունը դառնում է ոչ միայն լեզվական, այլ նաև մեթոդաբանական հմտություն, որն անմիջականորեն ազդում է օպերատիվ որոշումների կայացման, քրեական հետախուզության, հանրային անվտանգության գնահատման և տեղեկատվության վերլուծության վրա:

Հետևաբար, անգլերենի մասնագիտական բառապաշարի ընդլայնումը պետք է դիտարկվի ոչ թե ձևական պահանջ, այլ իրավապահ համակարգի արդյունավետության և մասնագիտական կոմպետենտության բարձրացման հիմնարար բաղադրիչ:

Անգլերենի դերն իրավապահ համակարգում շարունակելու է մեծանալ՝ պայմանավորված ինչպես գլոբալ անվտանգության մարտահրավերների խորացման, այնպես էլ ոստիկանության գործունեության միջազգային ինտեգրումով: Ապագա զարգացումները ցույց են տալիս, որ իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանքն առավել կախված կլինի այն կարողությունից, որով նրանք կարող են գործել բազմալեզու տեղեկատվական միջավայրերում, համագործակցել միջազգային գործընկերների հետ և արձագանքել անդրսահմանային հանցագործությունների նոր ձևերին:

Այս համատեքստում անգլերենի տիրապետումը ձեռք է բերում ռացմավարական նշանակություն՝ դառնալով այդ հենասյուներից մեկը, որը թույլ է տալիս ընդլայնել ծառայողների մասնագիտական կարողությունները և ապահովել ժամանակակից պահանջներին համապատասխան գործառնական ճկունություն:

Ապագայում ակնկալվում է, որ անգլերենը կդառնա ոչ միայն հաղորդակցման միջոց, այլ իրավապահ կրթության առանցքային բաղադրիչ՝ ընդգրկված ուսումնական ծրագրերում, վերապատրաստումների համակարգում և մասնագիտական վերլուծական գործունեության մեջ:

Տեխնոլոգիական նորարարությունները՝ Արհեստական բանականությունը, կիբեռանվտանգության լուծումները, միջազգային հարթակները, պահանջելու են ավելի խորքային լեզվական գիտելիքներ, քանի որ դրանց մեծ մասը գործում է անգլերեն միջավայրում:

Այս պայմաններում իրավապահ մարմինները պետք է մշակեն երկարաժամկետ ռազմավարություններ՝ ուղղված ծառայողների լեզվական կարողությունների շարունակական զարգացմանը, մեթոդական նյութերի տեղայնացմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը և գիտական հետազոտությունների ինտեգրմանը:

Այսպիսով՝ անգլերենի կիրառման ընդլայնումը դառնում է ոչ միայն ներկայիս խնդիրների արձագանքող մոտեցում այլ նաև իրավապահ համակարգի ապագա կայունության, ինստիտուցիոնալ աճի և միջազգային մրցակցության ապահովման ռազմավարական ուղղություն:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի միջին մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության «Ոստիկանության սպա» որակավորման օրինակելի ուսումնական պլանում անգլերենի համար հատկացված 72 ժամը, որն ավարտվում է երկու կիսամյակների ընթացքում, առաջարկում ենք ավելացնել այնքան, որ երրորդ և չորրորդ կիսամյակներում ևս հնարավոր լինի ուսումնասիրել, սովորել և հմտանալ անգլերենի կիրառման մեջ:

Ինչու՞ ենք առաջարկում անգլերենի դասաժամերն ավելացնել. ավելացված դասաժամերի ընթացքում դասախոսը կարող է անցկացնել այնպիսի թեմաներ, որոնք կվերաբերեն՝

- Ոստիկանության միջազգայի համագործակցությանը,
- Միջազգային իրավունքի հիմնական անգլալեզու տերմիններին,
- Արտաքին աղբյուրներից ինֆորմացիայի կարդալուն:

Այս կարիքները պահանջում են, որ սովորողները շարունակեն անգլերենն ամբողջ չորս կիսամյակների ընթացքում:

ՆԳՆ համակարգում օգտագործվող սարքերի մեծ մասը՝ տեսաձայնագրիչներ, ծրագրեր, հաղորդակցության համակարգեր, արտասահմանյան արտադրության սարքեր, ունեն միայն անգլերեն ինտերֆեյս և համակարգեր, որոնք օգտագործելու համար պետք է ունենալ անգլերենի վարժ իմացություն, բայց հատկացված երկու կիսամյակը չի նախատեսում դա, և սա ևս մեկ շարժառիթ է անգլերենի դասաժամերի ավելացման:

Ուստի սովորողները պետք է ունենան բազային հաղորդակցման անգլերենի իմացություն, որպեսզի հետագայում կարողանան մասնակցել միջազգային ուսումնական ծրագրերին:

Նպատակահարմար է, որ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում ներդրվի միասնական և ինստիտուցիոնալացված մասնագիտական անգլերենի հավաստագրման (սերտիֆիկացիոն) համակարգ, որը կդառնա ուստիկանության ծառայողների լեզվական պատրաստվածության պետական ստանդարտ:

Սերտիֆիկացիոն մոդելը պետք է կառուցված լինի բազմաշերտ գնահատման մեթոդաբանությամբ՝ ներառելով լսողական ընկալում, մասնագիտական տերմինաբանության տիրապետում, իրավիճակային արձագանքման կարողություն և փաստաթղթավորման ճշգրտություն:

Տվյալ համակարգի շրջանակում ՆԳՆ կրթահամալիրը կարող է ներմուծել միավորային առաջընթացի չափորոշիչներ (benchmarking), ինտերակտիվ սիմուլյացիաներ, կիբեռնանցագործությունների բնագավառի լեզվական մոդուլներ և օպերատիվ հաղորդակցման հմտությունների գործնական գնահատում:

Այս ձևաչափը հնարավորություն կտա համակարգայնորեն բարձրացնելու ծառայողների լեզվամշակութային պատրաստվածությունը, ապահովելու լեզվական կարողությունների համահունչ զարգացում օպերատիվ ծառայության պահանջներին և նպաստելու ՆԳՆ-ի միջազգային գործընկերային ներգրավվածության որակական աճին:

Սերտիֆիկացիոն համակարգը պետք է ունենա բազմաշերտ կառուցվածք, որը կներառի լեզվական ընդհանուր կարողությունների ստուգում, մասնագիտական տերմինաբանության տիրապետում, օպերատիվ հաղորդակցման հմտությունների գնահատում, ինչպես նաև իրավական փաստաթղթերի կազմման և միջազգային համագործակցության շրջանակներում կիրառվող մասնագիտական լեզվի իմացության ստուգում: Նման համակարգը հնարավորություն կտա ապահովել, որ ուստիկանության յուրաքանչյուր ծառայող ձեռք բերի այնպիսի լեզվական կարողություններ, որոնք համարժեք են նրա գործառույթների բարդությանը, հատկապես կիբեռնանցագործությունների դեմ պայքարի, միջազգային համագործակցության և

օպերատիվ հաղորդակցման ոլորտներում, որտեղ անգլերենի կիրառությունը համատարած և աճող պահանջ է:

Միջազգային կրթական ինստիտուտներում ավելի քան մեկ տասնամյակ մշակված փորձը փաստում է, որ իրավապահ մարմիններում օտար լեզվի, հատկապես՝ անգլերենի, համակարգված սերտիֆիկացիան բարձրացնում է ծառայության որակը, արագ արձագանքման արագությունը և միջմշակութային հաղորդակցման արդյունավետությունը: CEPOL-ի կողմից իրականացվող «Law Enforcement English» ծրագրերն ընդգծում են, որ բազմամակարդակ գնահատման համակարգն առավել արդյունավետ է, քանի որ այն տարբերակում է ընդհանուր լեզվական գիտելիքը մասնագիտական կիրառությունից՝ ապահովելով ծառայողի պատրաստվածության իրական չափման հնարավորությունը¹³:

Միջազգային հետազոտությունները ցույց են տալիս, որ իրավապահների մասնագիտական լեզվային հմտությունների պակասը նվազեցնում է օպերատիվ որոշումների ճշգրտությունն ու արագությունը, իսկ սերտիֆիկացման ներդրումը կտրուկ բարձրացնում է միջամտությունների որակական ցուցանիշները¹⁴:

Հայաստանի համար խնդիրն առավել հրատապ է, քանի որ ՆԳՆ կրթահամալիրն արդեն մի քանի տարի գտնվում է կրթական արդիականացման փուլում և զարգացնում է ծառայողների վերապատրաստման ոլորտային ծրագրեր, որտեղ անգլերենի դերը գնալով մեծանում է ինչպես միջազգային իրավակարգավորման, այնպես էլ համաշխարհային անվտանգության միջավայրում ինտեգրման պահանջների հետևանքով: Ուստի սերտիֆիկացիոն համակարգի ներդրումը թույլ կտա կրթահամալիրին գործել միջազգային չափանիշներին համընթաց՝ ապահովելով ոչ միայն լեզվական, այլև մասնագիտական հմտությունների վերահսկելի և չափելի զարգացում:

Այսպիսով, առաջարկվող սերտիֆիկացիոն ինստիտուտը կդառնա ՆԳՆ կրթահամալիրի կրթական բարեփոխումների հիմնասյուններից մեկը՝ ամրապնդելով իրավապահ համակարգի պրոֆեսիոնալ կարողությունները, այդ թվում՝ համայնքային

¹³ St' u Pielmuş C. G., Innovation in Teaching English for Law Enforcement: A Technology-Integrated Approach, Rezekne: Society. Integration. Education., Vol. 3, 2018, էջ 566–579.

¹⁴ St' u Levashov O. S., Orlova O. O., Ways to Improve Foreign Language Teaching in Police Officers' Training, Law and Safety, Vol. 80(1), 2021, էջ 49–54.

նստիկանության, քրեական նստիկանության, պարեկային ծառայության և նստիկանության գվարդիայի ծառայողների կարողությունները, բարձրացնելով նրանց լեզվական կրթական մակարդակը և ապահովելով ՀՀ ՆԳՆ նստիկանության համապատասխանությունը տարածաշրջանային և միջազգային համագործակցության արդի չափանիշներին:

ENGLISH IN LAW ENFORCEMENT: EXPANDING THE ROLE OF LANGUAGE IN POLICING

POGHOSYAN LEONARD

Chief Specialist of the International Cooperation and Public Relations Department of the Educational Complex of MIA of the Republic of Armenia, Lecturer at the Chair of General Humanities and Socioeconomic Disciplines, Rescue Service and Crisis Management Educational Unit

GENJOYAN GRIGOR

Second-Year Cadet of Vocational Education Division Specialized in Policing, Police Educational Unit of the Educational Complex of MIA of the Republic of Armenia

MATEVOSYAN VARYA

Second-Year Cadet of Vocational Education Division Specialized in Policing, Police Educational Unit of the Educational Complex of MIA of the Republic of Armenia

Abstract. The problem of effective communication within law enforcement systems has become increasingly significant, especially as operational tasks, international cooperation, and cybercrime investigation demand higher linguistic competence. It is known that the integration of English into policing practices enhances both professional efficiency and institutional adaptability. In modern conditions, where security threats often transcend national borders, English proficiency functions not merely as a communicative tool but as a strategic component of institutional capacity-building.

This research work is dedicated to examining the multifaceted role of English in law enforcement, with a specific focus on its expanding function within the police sector. The article explores the methodological, operational and educational dimensions of the English language application in policing. The article provides an in-depth analysis of language training strategies for police officers, emphasizing the need for structured, competency-based, and profession-oriented English instruction. Furthermore, the study presents the applicability of English in cybercrime investigation, where access to international databases, cross-border information exchange and cooperation with foreign agencies require specialized linguistic preparedness. In its turn, the article also highlights the impact of the English language skills on the effectiveness of operational and crisis communication and rapid information processing during field operations.

The methodological basis of this research is a comparative and analytical approach supported by thematic literature review, synthesis of international standards, and examination of best practices in police education. The authors examine the evolution of linguistic policies within law enforcement

institutions and the mechanisms through which the English language competencies influence professional decision-making and situational responsiveness.

The article also analyzes theoretical approaches to the professionalization of linguistic training in police education, identifying core structural elements necessary for curriculum modernization. Taking into account the growing demand for specialized communication skills, the study substantiates the argument that English has transformed into an operational resource for improving investigative accuracy, coordination and institutional transparency.

Given these facts, the article justifies the point of view that the English language competence must be institutionalized as a mandatory and measurable component of law enforcement training. The solution to the problem is developing multilayer certification mechanisms, integrating applied English modules into investigative and cyber units, and ensuring systemic cooperation between national and international training centers. The article also offers several policy-oriented recommendations aimed at enhancing the linguistic capacity of police personnel.

Therefore, the conclusions and the above-mentioned proposals are aimed at reinforcing the professional readiness of law enforcement officers, strengthening international cooperation and modernizing the language-teaching ecosystem within policing institutions. The study demonstrates that the expansion of the English language functions in policing is not only relevant but strategically essential for the effective performance of law enforcement agencies in the contemporary security environment.

Key words: English for specific purposes (ESP), policing, law enforcement bodies, future perspectives, language, operational communication, commands.

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ЗНАНИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА В ПОЛИЦЕЙСКОЙ СЛУЖБЕ

ПОГОСЯН ЛЕОНАРД

*Главный специалист отдела международного сотрудничества и
связям с общественностью Образовательного комплекса МВД РА,
Преподаватель английского языка кафедры общих гуманитарных
и социально-экономических дисциплин Образовательного комплекса МВД РА*

ГЕНДЖОЯН ГРИГОР

*Курсант 2 курса среднего профессионального образования
по специальности «Полицейское дело»
полицейского учебного подразделения
Департамента базового и офицерского образования
Образовательного комплекса МВД Республики Армения*

МАТЕВОСЯН ВАРЯ

*Курсант 2 курса среднего профессионального образования
по специальности «Полицейское дело»
полицейского учебного подразделения
Департамента базового и офицерского образования
Образовательного комплекса МВД Республики Армения*

Аннотация. В статье рассматриваются комплексные и многослойные процессы, определяющие расширение роли английского языка в деятельности правоохранительных органов, в результате чего он превращается не только в практическое средство коммуникации, но и в важный фактор институционального развития. В данном контексте важно подчеркнуть, что английский язык постепенно формируется для сотрудников как язык, имеющий существенное значение, оказывая влияние на структурные и многоуровневые аспекты функционирования правоохранительной системы.

В статье анализируются ключевые факторы, способствующие расширению функциональной роли английского языка, включая развитие международного сотрудничества, расширение совместных операций и расследований, стремительное развитие информационных технологий, а также внедрение единых глобальных стандартов коммуникации. Также в работе исследуются важные и многоплановые вопросы, связанные с ролью и применением английского языка в правоохранительных органах, в частности в полицейской деятельности.

При изучении особенностей преподавания становится очевидным, каким образом разрабатываются образовательные программы, обеспечивающие подготовку сотрудников как на национальном, так и на международном уровнях, с одновременным учетом практических требований и правовых особенностей. Важно отметить, что использование английского языка не только повышает эффективность работы полиции, но и способствует модернизации правоохранительных органов и улучшению качества коммуникации с международными партнерами.

В статье представлена роль профессионального английского языка в системе правоохранительных органов с акцентом на требования к преподаванию, международный опыт, особенности применения, а также языковые и методические вызовы.

Ключевые слова: профессиональный английский, полицейское дело, правоохранительные органы, перспективы, язык, оперативная связь, приказы.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Hall D., International Cooperation and Language Competence in Law Enforcement //Journal of Police Studies, Vol. 14, No. 2, London, 2020, pp. 45–62:
2. Fountoulakis M. St., English Language Proficiency and Its Impact on Professional Identity, Operational Skills, and Gender Dynamics among Police Cadets in Greece, Athens, Journal of Advanced Research in Social Sciences, Vol. 7, No. 3, 2024, pp. 89–102:
3. García, A., Morton, L., Terminology Management and Language Training in Modern Police Forces, Madrid, International Journal of Applied Linguistics in Public Safety, Vol. 9, No. 1, 2019, pp. 33–57:
4. Carton, A., The Process of Dictionarisation in English for Police, Moscow, Linguistics and Security Journal, No. 75, 2019, pp. 79–95:

5. Harper, S., Innovative Language Teaching Technologies for Law Enforcement, New York, Journal of Public Safety Pedagogy, Vol. 11, No. 4, 2021, pp. 120–141:
6. Larsen, P., The Role of English in Police Modernization and Public Trust Building, Copenhagen, Journal of Security and Social Communication, Vol. 6, No. 1, 2022, pp. 14–28:
7. Fountoulakis M., Standardizing ESP Pedagogy: A Critical Evaluation of Language Training for Law Enforcement Cadets // International Journal of Higher Education Pedagogies, Vol. 6, No. 1, 2023, pp. 45–59:
8. Pielmus C. G., Innovation in Teaching English for Law Enforcement: A Technology-Integrated Approach, Society. Integration. Education., Vol. 3, 2018, pp. 566–579:
9. Holt T. J., Cybercrime and Digital Forensics: An Introduction, London, New York, Routledge, 2022, Chapter 4, pp. 87–110:
10. Rantatalo O., Intercultural Competence in the Training and Daily Professional Lives of Police Officers, Socrates. RSU Law Faculty// E-Journal of Law, Issue 26, 2023, pp. 91–95:
11. Pielmuş C. G., Innovation in Teaching English for Law Enforcement: A Technology-Integrated Approach, Rezekne, Society. Integration. Education., Vol. 3, 2018, pp. 566–579:
12. Levashov O. S., Orlova O. O., Ways to Improve Foreign Language Teaching in Police Officers' Training // Law and Safety, Vol. 80, No. 1, 2021, pp. 49–54:
13. https://en.wikipedia.org/wiki/Dark_web , մուտք՝ 20.01.2026
14. https://en.wikipedia.org/wiki/Open-source_intelligence , մուտք՝ 20.01.2026
15. https://en.wikipedia.org/wiki/Computer_emergency_response_team , մուտք՝ 20.01.2026

Հոդվածը գրախոսվել է 20.02.2026
Ներկայացվել է տպագրության 25.02.2026